Գործ թիվ ԵԴ2/7575/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու
և դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին

2023թվականի հունիսի 13-ին Երևան քաղաքում

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «Պրոֆ Ալ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Պրոֆ Ալ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից 05.06.2023թվականին հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ պայմանագիրը միակողմանի լուծման մասին ծանուցումը և հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ գրությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին:

Հայցադիմումը 05.06.2023թվականին մակագրվել և 08.06.2023թվականին հանձնվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, Երևանի քաղաքապետարանից պետք է պահանջել ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/1 ծածկագրով մրցույթի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.«Պրոֆ Ալ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կեղմից կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ պայմանագիրը միակողմանի լուծման մասին ծանուցումը և հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ գրությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

2.Երևանի քաղաքապետարանից պահանջել դատարան ներկայացնել ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/1 ծածկագրով մրցույթի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող Երևանի քաղաքապետարանի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023թվականի հուլիսի 13-ին:

5.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Digitally signed by AVETISYAN NAIRA
7501660379